Lermetin

ՀՀ, ք.Երևան, Արին-Բերդ 17/16, հեռ. (+374)99 538389 էլ.հասցե gohar_avetisyan@mmi.am, info@lermetin.am «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ ՓԼ. հավատարմագրման վկայագիր N016/T-099 -16.12.2025թ
(փորձարկման լաբորատորիայի անվանումը, հավատարմագրման գրանցահամարը, հավատարմագրման ավարտի ամսաթիվը)

*ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ*

*ՓԼ-ի ղեկավար՝__________ Գ.Ավետիսյան*

*«__25__» __06____ .2025թ*

# ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1-34-2025-H

առ «_25_» ___06_____ 2025 թ.

**Նմուշի տեսակը՝** *մթնոլորտային օդ (փոշի, աղմուկ)*

(տիպը, տեսակը, մակնիշը և այլն)

**Նմուշի կոդը, համարը** *ՀՖ վարչական շենք, Ախթալա ավան, Բարիտ ավան, Սվինեց ավան*

**Տեղեկատվություն ստանդարտացման փաստաթղթի (ՍՓ)-ի և/կամ կիրառվող մեթոդի վերաբերյալ** *ԳՕՍՏ 17.2.4.05-83*

**Նմուշառման թվականը** 17.06.2025թ

**Փորձարկվող նմուշների քանակը.**(4) չորս

**Փորձարկվող նմուշների ստացման ամսաթիվը** 17.06.2025թ

**Փորձարկման իրականացման ամսաթիվ** 17.06.2025թ

**Փորձանմուշները ներկայացնողի տվյալները**

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, 1709, ՀՀ, Լոռու մարզ, ք.Ախթալա ,Պայմանագիր՝ **34-2025-H**

(ներկայացնողի անվանումը, հասցեն, ուղեկցող նամակի համարը, պայմանագրի/ակտի համարը, ամսաթիվը)

**Փորձարկումը սկսվել է** 17.06.2025թ

**Փորձարկումն ավարտվել է** 17.06.2025թ

**Փորձարկման վայրը** «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ ՓԼ-ի ՇՄՄ բաժանմունք

Արձանագրությունը կազմված է 4 (չորս) էջից 2 (երկու) օրինակ:

***Պատասխանատու կատարողներ՝***

Շրջակա միջավայրի մոնիթորինգի բաժանմունքի գիտ.աշխ՝__________ Ա.Քոչինյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Շրջակա միջավայրի մոնիթորինգի բաժանմունքի աշխատակից՝ __________ Ա.Սարգսյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն, 0010
Խանջյան 19 փողոց
www.lmi.am
№010

# 1. Ընդհանուր տեղեկատվություն

17 հունիս 2025թ. «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության Շրջակա միջավայրի մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից «Ախթալա» ԼՀԿ տարածքում 34-2025-H պայմանագրով նախատեսված կետերում իրականացվել է օդում փոշու պարունակության և աղմուկի չափումներ.

- Դիտակետ 1 - գտնվում է վարչական շենքի մոտ (ընդհանուր փոշի),
- Դիտակետ 2 – Ախթալա ավան (ընդհանուր փոշի, աղմուկ),
- Դիտակետ 3 – Բարիտ ավան (ընդհանուր փոշի),
- Դիտակետ 4 – Սվինեց ավան (ընդհանուր փոշի, աղմուկ) :

Կետերի տեղադիրքի կոորդինատները, կլիմայական պայմանները և աշխատանքների նորմատիվ կանոնակարգերը բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

*Դիտակետերի մասին տեղեկություն*

| Դիտակետի անվանումը | Կլիմայական պայմաններ | | | Կոորդինատները | Նորմատիվ փաստաթղթեր | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մթնոլորտային ճնշում, ՀՊա | Օդի ջերմաս-տիճանը, °C | ՕՀԽ % | | Ընդհանուր փոշի | Աղմուկ |
| Դիտակետ 1 | 927.9 | 24.7 | 43.2 | N 41 ⁰08 ' 51.42 "<br>E 44 ⁰45 ' 47.13 " | ՀՀ կառավարու-թյան 02.02.2006թ N160-Ն որոշում | ՄՆ N2 III-11.3 |
| Դիտակետ 2 | 928.2 | 24.6 | 43.0 | N 41 ⁰ 08 ' 44.8 "<br>E 44 ⁰ 46 ' 13.22 " | | |
| Դիտակետ 3 | 943.0 | 22.2 | 59.5 | N 41 ⁰ 09 ' 12.4 "<br>E 44 ⁰ 45 ' 53.13 " | | |
| Դիտակետ 4 | 931.8 | 23.5 | 54.4 | N 41 ⁰08 ' 59.3 "<br>E 44 ⁰46 ' 37.95 " | | |

Չափումներն իրականացվել են՝

Ассистент-TOTAL №168613 աղմկաչափ-թրթռաչափ սարքով (համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. հոկտեմբերի 16-ի N 61-Ն և N 62-Ն հրամանի),
Փոշու կոնցենտրացիան չափվել է Aerocet 831 գերճշգրիտ սարքի միջոցով,
Կլիմայական տվյալները չափվել են Kestrel 5500 №009088 սարքով,
Աշխարհագրական տվյալները վերցված են Garmin Legend Etrex GPS սարքից:

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն, 0010
Խանջյան 19 փողոց
www.lmi.am





Նկար 1. ՀՖ շենքի տարածք



Նկար 2. Ախթալա ավան



Նկար 3. Բարիտ ավան



Նկար 4. Մվինեց ավան

ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն, 0010
Խանջյան 19 փողոց
www.lmi.am


## 2.Չափման արդյունքները

### 2.1. Ընդհանուր փոշու պարունակությունը

Չափումների բարձր ճշտության ապահովման համար ամեն կետում իրականացվել են ավելի քան 5 չափում:

Չորս դիտակետերում որոշվել է օդում փոշու պարունակության միանվագ առավելագույն պարունակությունները (աղյուսակ 2): Դիտակետ 4-ում (Սվինեց ավան) չափման իրականացման պահին կատարվում էին ասֆալտապատման աշխատանքնե՛ր:

Աղյուսակ 2

*Օդում ընդհանուր փոշու պարունակությունը*

| ՀՀ | Դիտակետի համարը | Անվանումը | Միանվագ առավելագույն պարունակությունը, մգ/մ$^3$ | ՍԹԿ, մգ/մ$^3$ |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտակետ 1 | ՀՖ վարչական շենք | 0.044 | *1.2** |
| 2 | Դիտակետ 2 | Ախթալա ավան | 0.020 | *0.5*** |
| 3 | Դիտակետ 3 | Բարիտ ավան | 0.033 | *0.5*** |
| 4 | Դիտակետ 4 | Սվինեց ավան | 0.029 | *0.5*** |

* - վերցված արտհրապարակի համար սահմանված ՍԹԿ (Сборник законодательных, нормативных и методических документов для экспертизы воздухоохранных мероприятий, Ленинград, ГИДРОМЕТЕОИЗДАТ, 1986г. стр. 99)

** - վերցված է բնակելի գոտու համար սահմանված ՍԹԿ

### 2.2 Աղմուկի մակարդակը

Ըստ ժամանակային բնութագրի աղմուկը Դիտակետ 2 և 4-ում մշտական տեսակի է: Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակները սահմանվում են բնակելի գոտիների համար: Մշտական աղմուկի բնութագիրն է հանդիսանում $L_{ա}$-ն արտահայտված դԲԱ-ով:

Աղյուսակ 3

*Աղմուկի չափման արդյունքները*

| ՀՀ | Դիտակետի համարը | Անվանումը | Չափում | | ՍԹԱ*, դԲԱ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *Միջին էկվիվալենտ արժեքը, Լաէկվ, դԲԱ* | *Առավելագույն էկվիվալենտ արժեքը, Լամax, դԲԱ* | *Լաէկվ, դԲԱ* | *Լամax, դԲԱ* |
| 1 | Դիտակետ 2 | Ախթալա ավան | *59.4* | *63.2* | *45** | *60** |
| 2 | Դիտակետ 4 | Սվինեց ավան | *61.6* | *70.2* | *45** | *60** |

* -սահմանված ՍԹԱ օրվա $6^{00}$ - $22^{00}$ ժամերին

Պատասխանատու կատարող՝

ՇՄՄ բաժանմունքի աշխատակից՝ Ա.Սարգսյան